

82. ԹԱՄԲԱԼՆԵՆ

Ինըմ ա չինըմ, չորս թամբալ մարթ ըն ինըմ, էնքան թամբալ. վըեր նըղանըմ ըն, թա հացն էլ կոլ տան, սաղ օրը հեն ըն ինըմ շենըմը ըրևին տակեն վըեր տեռած։ Էնքան էլ ճանշեր ա ինըմ թուվ տեռած, վըեր նըղանըմ ըն, թա ճանշերն էլ քշին։ Քշեր-ցիրեկ շինըմաչըմը վըեր տըեռած, նըղանըմ ըն, թա ուրուր նըհետ էլ խոսին։ Օրվա վըեր վախտն էլ տըեսնաս, հեն կինին քոն իլած, վըեչ կասին, վըեչ կը խոսին, վըեչ կոտին, վըեչ կըխըմին, ուրանց շատ թամբալ ինիլան նըղանըմ ին, թա ըշկըրնեն էլ պենան։ Վըեր քըշտըրներեն հարայ էլ տաս, թա. «Հա՜յ հարայ, կյուլերը եկեն, հա՜յ հարայ, ճըրհեղեղ ա, հա՜յ հարայ, օխծը կըծըմ ա, հա՜յ հարայ, երգյինքյը փոլ ա կյամ», վըեր ասիս, տըղըրներան էլ տըմբըհան չըն ինիլ, վըեչ ըշկըրնեն պեց կանին, վըեչ մին քյալամա կըխոսին։ Շենին մարթ, կընեգյ, խոխա-ըրախա քշտըրներեն պըպըգըմ ըն, հացան ծամըմ, ոըխներըմը տինըմ, վըեր մին կյեբպ կոլ ըն տամ, ճուրը տալիս՝ շորը թըռչըմ ըն, պիրըններըմը մըղում, վըեր մին թահրավ կաթ-կաթ կոլ ըն տամ, վըեր սովածությունան կըտորվին վեչ։

Շենին ախսախկալնեն մին օր հըվաքված մըտածըմ ըն, վըեր ախեր ուրանց շենին պատիվ չի պերըմ, ամեն մին ղարիբ մարթ կյալավ շենը, տըեսնըմ ա սըրանց ըրարմունքը, ուրանց էլ նամուս ա կյամ, կյամ ըն մըսլըհաթ անըմ, տանըմ սրանց շենան մին ղըրաղ տան վըեր քցըմ, ուրանք էլ լըհա մին թահրավ, նուրաթավ ըտրանց ուտուցնըմ, խմըցընըմ։

Կյամ ա ծմրեռնը մուտանըմ, ցուրտերն ընգնըմ։ Շինացեք

մըսլըհաթ ըն անում, վրեր հարկավրեր ա ըսրանց հետե փադու հոբս անել, թա. «Զինա ծմբեռնը կը փիդանան, ցուրտան կըկըտորվին, հինչ ա՞նինքյ, վրեր ըտրանց անա մինը լըհա մըզնըհետ տանինքյ ծըմակը, մունք փադը կանինքյ, կըպեռնինքյ, մըեր իշերավը կըպերինքյ, թաքյ լըհա մինը կյա տրեսնա, բալքյի հըմանչի, նամուս կյա, ընդրանց էլ իննադի քցի»։

Մին ռոութանա հենգյ շինացե յոր ըն օնում հենգյ էշ, կյամ ըտահանց կոշտը, վրեր ըտրանց անա մինն էլ յոր օնին քյինին ծըմակը, ուրանց հետե փադ անին։ Վրերեն վրեր խուսուցընում ըն, ըտբանք նրղընալան նրհետ ջուղուրնեն էլ չըն տամ։ Վերչը, շատ ըսելան, կոբև ընբելան, հրսկրցնելան ետը մին թահրավ ըտրանց անա մինը ղոռավ-կյիժավ խոսկերքը կըսրտ-կեսատ թա ասում ա. «Դե- վ-ը-ե-ր շ-ա-տ ը-ք օզում, ինձ տ-ա-ր-եքյ»։

Շինացեքյ ճըրրրնեն կտրրած, ղոռավ-կյիժավ ըտրան պըցրրցրնում ըն էշին յրա նրստրցնում, քշում ծըմակը։ Վրեր հրսնում ըն ծըմակը, տափրեն մին կարպրետ ըն վրեր քցում, քյընդրրնեն ետ անում, էտ թըմբալին էշան վրեր տընում, կրրպետեն յրան նրստրցընում։ Թամբալը թա ասում ա. «Զէ՛, ն-ը-ղ-ա-ց-ա-ծ ը-մ, պ-ը-ր-կ-ը-ց-ը-ր-է-քյ, վը-եր դ-ի-ն-ջ-ա-ն-ա-մ»։

Շինացեքյ պըրկրցընում ըն, ուրանք ըսկրսում փադ անելը։ Թամբալն էլ տամ ա, քընավ ընցընում, վրեր դինջանա։ Շինացեքյ մին խիլլա փադ ընելան ետը կյամ ըն, թա եր կրցընին, վրեր հաց ուտուցընին, թամբալն էլ թա ասում ա. «Ա՛խ լ-ա-վ է՞, լ-ա-վ, թ-ո-ղ կ-ա-ց-ե-քյ պ-ա-տ-ա-ռ դ-ի-ն-ջ-ա-ն-ա-մ»։

Դե մըհենգյ շինացեքյ թող հաց օտին, թամբալն էլ դինջանա, անց կենանք տանը մնացած էն իրեք թըմբալին։ Հունց կըպըտահե, ըտրանց տոնը նի կրկենա, ըսկրսե էրիլը, ըտրանց անա մինը կրակը վրեր տրեսնում ա, ղոռավ-կյիժավ, շատ գյրնգյըլըխտա սրիրանէն մին ղոլավը ծեն կըտա. «Է՞-ր-վ-ը-մ ը՞մ, է՞-ր-վ-ը-մ ը՞մ»։ Հընգերեն մինը թա. «Ա՛-ր-ա, ա-ս-ե հ-ը-ն-գ-եր-ը-ս է-լ-ա է՞-ր-վ-ր-մ»։ Էն մին հընգերն էլ ետ կըտեռնա, թա. «Ա՛-ր-ա, լ-ա-վ, ն-ը-ղ-ա-ն-ըմ, չ-ը՞-ք, է-տ-ք-ա-ն վը-ե-ր խ-ռ-ս-ըմ ը-ք»։ Մինչև սըրանք ուրուր ընգնելը կրակը սաղ տոնը փրռնե, ուրանց էլ մաչին էրի։

Մրհենգյ անց կենանք էն ծըմակեն թըմբալին։ Շինացեքյ ըռութանա մինչև ժըմրժենքը փադն անում, էշերը պեռնում, մուտանում ըն էն թըմբալին, թա. «Ես կաց բյինանք»։ Թամբալը մին թահրավ թա ասում ա. «Կ-ա-ր-ե-լ չ-ը-մ, հ-ու-ն-ց վը-ե-ր պ-եր-

ալ-ըք, ի-ն-դի է-լ տ-ա-ր-ևքյ»։ Ախր էտ խըեղճ շինա̈ցէքյ տըևս-նան, վըեր էլ ճար չըկա, էշերը պեռնած ա, յա րիդի թողին ծըմա-կըմը, յա րիդի մին թա̈հրա̈վ տանին։ Ըտրանց մինը հենդյ պեռնած էշևրն ա քըշըմ, էն չորս հոքին էլ էտ թըմբա̈լին կըրպետևն յրա պարանց քըցած, կըրպետեն քյունջերքան փըռնըմ, թըմբա̈լին յեր օնըմ, տանըմ։ Մին պատառ վըեր քյինամ ըն, մին կըծանավ էշերը ցըրև ըն կյամ, ըստեղ-ընդեղ կդըշըմ։ Ծարը կըտըրած, էշ քշողը ետ ա տըեռնըմ, կյամ հընդերունցը ասըմ, թա. «Մինակ ես կարըմ չըմ հենդյ էշ քշիմ, եկեքյ քյո̈մա̈գյ իլիքյ»։ Էտ ղա̈րըմը թա̈մբա̈լը եր ա կենըմ կըրպետըմը նըստըմ, էն էշ քշողին յրա կըղնվըմ, թա ասըմ ա. «Պա տու հինչ կըկա՞րիս անիս, վըևչ էշե-րը քշիլը կըդյիդա̈ս, վըեչ էլ կըրպետին ճունդան փըռնելը»։

Մինչև էտ թըմբա̈լին կըրպետըմը ճունդերան փըռնած պերըմ ըն շենը, քշերը լուսա̈նըմ ա։